

— Քալէ՛, իշխան, քալէ՛,— ըսելով սենեկին դուռը բերաւ, եւ հոն երկու հոգի իւր ընկերներէն զինքը պատրաստ ջորիի վրայ պարկի մը պէս նետեցին, առանց իւր աղաղակներուն ականջ դնելու:

Եւ նոյն միջոցին ուրիշ երկու հոգի էլ երկու ոտքերը ամուր՝ կենդանուոյն ոտքին տակէն իրար կը կապէին:

Մուշեղ աչքերը ան ատեն չորս կողմը դարձուց եւ տեսաւ, որ բակը լեցուն է զինեալ մարդերով, յուսահատութիւն զինքը պաշարեց եւ իմացաւ, որ դիմադրութիւնն անկարելի էր. ուստի այն սկսաւ մտքէն չափել թէ այդ աւազակաց ի՞նչ փրկանք տալով կրնար ազատիլ

Իսկ Յայր Սուրբը, աւելի խոհեմ՝ իւր վերարկուն խնդրեց եւ հեծաւ իւր ջորուոյն վրայ ու տեսնելով թէ աւազակները (սա էլ մտքէն ուրիշ անուն չէր կրնար տալ իւր հիւրերուն) ամենքը հետեւեակ յէին, առջի ազատ քայլափոխին փախչիլ եւ վանք դառնալ եւ դռներն ամուր փակել եւ հիւրընկալութեան, ողորմութեան անուն չի տալ կեանքին մէջ որոշեց մտքէն:

Ուստի, երբ քիչ մը տեղ գնացին եւ դեռ վանքին պարիսպները անյայտ չէին եղել եւ Յայր Սուրբը լեռնականաց շրջանակէն ինքզինքը դուրս տաւ, ջորուոյն գլուխը դարձուց, մտրակեց երկու ոտից ամենայն զօրութեամբ, եւ դառնալով լեռնականաց. «Մնաք բարով, աստուած ձեզի բարի յաջողութիւն տա» գոչեց եւ սկսաւ կրակի պէս երթալ: Իսկ Յովնան. «Տղա՛ք, ձեզ տեսնեմ, Յայր Սուրբը ճամփան շփոթեց, դարձուցէ՛ք», աղաղակեց եւ քսան հոգի սրացան ետեւէն եւ վանքին պարիսպներուն չի հասած շրջապատեցին ջորին, եւ կենդանուոյն գլխէն բռնելով հասուցին խմբին, որ ամենեւին իւր ընթացքէն չէր կասել եւ կը շարունակէր ճամփան:

Մեր խումբը երեք ժամու չափ սասունցուոյ ընթացքով քայլելով, հասաւ շամբի մը առջեւ եւ մտաւ եղեգներու անտառին մէջ սառած ջուրին վրայ ապահով քայլելով, եւ ահա այդ անտառին մէջ կար քաղաք մը իւր օճապտոյտ ճամփաներով, ուր մեր սասնցիք մտան իբրեւ իրենց տուն, եւ վերջապէս կ'անգնեցան բերդանման,